ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

03 մայիսի 2017 թվականի N 66-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդածներով, հիմք ընդունելով <Էդգար և Արման> ՍՊԸ-ի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 005 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ 2017թ մարտի 31-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՖ 34 և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները, ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Էդգար և Արման> ՍՊ ընկերությանը ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հառիճի տեղամասից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/006 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 40 տարով, սահմանելով մինչև՝ 2056 թվականի նոյեմբերի 3-ը:

2) ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի Հառիճի տեղամասը արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի՝ <1.X=4499185 Y=8416192, 2.X=4499285 Y=8416118, 3.X=4499363 Y=8416202, 4.X=4499263 Y=8416270> (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ «1. X=4498905 Y=8415691, 2. X=4498938. Y=8415566, 3. X=4499036 Y=8415504, 4. X= 4499149 Y=8415543, 5. X=4499204. Y=8415736, 6. X=4499278 Y=8415892, 7. X=4499510 Y=8415960, 8. X=4499484 Y=8416081, 9. X= 4499032 Y=8416377, 10. X=4498986 Y=8416264, 11. X=4499155 Y=8416162, 12. X=4499156 Y=8415957, 13. X=4498881

Y=8415794» (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված 22.8 հա տարածք, մարվող՝2213630 մ^3 պաշար:

3). Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 50000 մ^3 պաշար:

2.Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-006 պայմանագրում, լեռնահատկացման թիվ ԼՎ-006 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ